ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Վանաձոր 12.12.2017թ

«Վանաձոր համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի հանրային բաց լսումների ընթացքում ներկայացված առաջարկությունների և հարցերի

Բաց լսումները վարում էր համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանը:

Բարձրացված հարցերին հիմնական պատասխանող հանդես էր գալիս համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Բաց լսումների ընթացքում բարձրացված հարցեր և առաջարկություններ

1. **Արմեն Մատինյան** (ավագանու անդամ)

Առաջարկ- Համայնքի ավագանու նստավայրում ՀՀԿ ավագանու խմբակցությանը հատկացնել տեխնիկապես կահավորված աշխատասենյակ և բյուջեում նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցներ խմբակցության գործավարին բյուջեից աշխատավարձ վճարելու նպատակով, հիմք ընդունելով «ՏԻՄ» օրենքի 67-րդ հոդվածի պահանջները:

Առաջարկը լսումներ վարողն ընդունելի համարեց, սակայն առաջարկեց այս պահին նման փոփոխություն չանել բյուջեի նախագծում, քանի որ կստեղծվեն հնարավորություններ տարվա ընթացքում խնդիրը լուծելու համար, առավել ևս, որ գործավարներն անցնելու են իրենց պարտականությունների կատարմանը պայմանագրային հիմունքներով:

Առաջարկողը համաձայնեց լսումները վարողի հետ:

Առաջարկ- Հասարակական կազմակերպություններին հատկացված ֆինանսական միջոցների բաշխումն իրականացնել մրցութային կարգով և դրամաշնորհի հատկացման սկզբունքով՝ ըստ ներկայացված ծրագրերի:

Առաջարկը լսումներ վարողն ընդունելի համարեց և առաջարկեց ավագանու անդամներին մշակել հատկացման կարգ և հաշվետվողականության ձև:

Առաջարկները բյուջեում փոփոխություն չեն նախատեսում:

2. **Արտյոմ Գրիգորյան** (ավագանու անդամ)

Առաջարկ- Առաջարկվեց լսումներին ներկա ավագանու անդամներին գործընկերական կարգով ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենալ համայնքի բյուջեի եկամուտների

կատարման ընթացքին և ոչ միայն անձնապես կատարել իրենց տեղական տուրքերի , վճարների և հարկերի վճարման պարտականությունները, այլ նաև քարոզչական աշխատանք տանել ընտրողների շրջանում, որպեսզի քաղաքացիները ժամանակին և սահմանված չափով կատարեն իրենց պարտականությունները համայնքի բյուջեի նկատմամբ:

Առաջարկն ընդունվեց ի գիտություն:

Առաջարկը բյուջեում փոփոխություն չի նախատեսում:

3. **Սոխակ Մելքոնյան** (ավագանու անդամ)

Հարց- Որքանով են ավելացել կրթությանը հատկացվող ֆինանսական միջոցները 2018 թվականի բյուջեի նախագծում նախորդ տարվա համեմատ:

Հիմնական պատասխանողը տեղեկացրեց, որ նախորդ տարվա համեմատ կրթությանը հատկացվող բյուջետային միջոցների զգալի աճ է նախատեսվել, սակայն դա կապված է բյուջետային նոր վարչարարության հետ, քանի որ մանկապարտեզների ծնողական վճարներն ուղիղ մուտքագրվում են համայնքի բյուջե:

4 . **Կարեն Դավթյան** (ավագանու անդամ)

Առաջարկ- վերացնել բյուջեի նախագծում առկա տեխնիկական թերությունը և վերանայել թվաբանական գործողության արդյունքը «Համայնքի տարածքում արտաքին գովազդ» տողում գովազդային մակերեսի հաշվարկման արդյունքը:

Հիմնական պատասխանողն ընդունեց առաջարկը:

Առաջարկը բյուջեում փոփոխություն չի նախատեսում:

Հարց- Նախորդ տարվա բյուջեի համեմատությամբ բարձրացել են արտաքին գովազդի համար նախատեսված դրույքաչափերը, ինչով է պայմանավորված բարձրացումը:

Հարցին սպառիչ պատասխան տվեցին լսումներ վարողը և հիմնական պատասխանողը:

Հարց- Ավագանու անդամների գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափի որոշման վերաբերյալ և դրա հատկացման կարգը:

Պատասխան- Հիմնական պատասխանողը տեղեկացրեց, որ դա սահմանված է ՏԻՄ օրենքով և այն չի կարող գերազանցել ԱԺ պատգամավորի գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափի 30 տոկոսը: Իսկ հատկացման կարգին յուրաքանչյուր ավագանու անդամ կարող է տեղեկանալ համայնքապետարանի ֆինանսական բաժնում:

4. **Հայկազ Մովսիսյան** (ավագանու անդամ)

Հարց-Որքանով է իրատեսական և հիմնավոր 2018 թվականի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների կատարումը

Պատասխան- Լսումներ վարողը և հիմնական պատասխանողը տեղեկացրին, որ 2018 թվականի բյուջեն առանձնահատուկ է նրանով, որ բյուջեն կազմելիս հիմք է ընդունվել այն սկզբունքը, որ պետք է հենվել առաջին հերթին սեփական ուժերի և հնարավորությունների վրա, ինչն էլ այն գրավականն է, որը թույլ կտա կատարել բյուջեի եկամտային մասը:

5. **Սեյրան Ղամբարյան** (ավագանու անդամ)

Հարց- Արդյոք 2017թ. վկանին բյուջեով նախատեսված սակայն չկատարված աշխատանքների արդյունքում համայնքի բյուջեն ունի տնտեսումներ:

Պատասխան- Հիմնական պատասխանողը իրազեկեց տնտեսումների վերաբերյալ:

6. **Գայանե Քալանթարյան** (ավագանու անդամ)

Հարց- Ինչու են բյուջեում ավտոկայանատեղերի համար զրո չափով նախատեսել մուտքերը:

Պատասխան - Լսումներ վարողը հիշեցրեց, որ ավագանին համապատասխան որոշմամբ զրո դրույքաչափ է սահմանել ավտոկայանատեղերի համար:

Առաջարկ- Վարձակալված տարածքներում ավտոմեքենաների կայանման դիմաց գանձումներ կատարող իրավաբանական անձինք, եթե որևէ օրինական ծառայություն չեն մատուցում մեքենաների սեփականատերերին, համարել գանձումն անօրինական և իրազեկել քաղաքացիներին:

Առաջարկը քննարկվեց նաև Արտյոմ Գրիգորյանի, Արմեն Մատինյանի, Հայկազ Մովսիսյանի, Սեյրան Ղամբարյանի մասնակցությամբ :

Քննարկումներն ամփոփեց լսումներ վարողը և համաձայնելով առաջարկի հետ և նշեց, որ համայնքապետարանի գործնական քայլը կարող է լինել քաղաքացիներին իրազեկումը, որպեսզի նրանք կարողանան պաշտպանել իրենց շահերը և չվճարեն, եթե ծառայություն չի մատուցվել իրենց:

Առաջարկը բյուջեում փոփոխություն չի պահանջում:

7. **Առաջարկ**-սահմանել պարբերական հսկողություն և վերացնել տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց օբյեկտների առջև փողոցներում տեղադրված արգելափակոցները, եթե վարձակալության պայմանագրերում չկան նման իրավազորություններ:

Առաջարկն ընդունելի համարվեց լսումները վարողի կողմից:

Առաջարկը բյուջեում փոփոխություն չի նախատեսում:

Բաց լսումների ներկա բոլոր ավագանու անդամների կողմից առաջարկվեց Ամանորի կապակցությամբ նվերներ հատկացնել զոհված զինծառայողների ընտանիքներին:

Լսումներ վարողը տեղեկացրեց, որ Ամանորի միջոցառումների ծրագրում նախատեսված է նման հատկացումներ:

ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը